ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2022 թվականի հունվարի 18-ին

## ԱՆԿԱՆԽԻԿ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

### Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում կիրառվող հիմնական հասկացություններն ունեն հետևյալ իմաստը.

1) **անկանխիկ ձևով գործառնություն (վճարում)՝** կանխիկ կամ անկանխիկ եղանակով նախաձեռնած վճարում, որն ուղղված է (փոխանցվում է) շահառուի (վճար ստացողի) բանկային հաշվին, կամ անկանխիկ եղանակով նախաձեռնած վճարում, որն ուղղված է (փոխանցվում է) շահառուի (վճար ստացողի) էլեկտրոնային փողի հաշվին: Ընդ որում, անկանխիկ եղանակով նախաձեռնած վճարում է համարվում նախաձեռնողի բանկային կամ էլեկտրոնային փողի հաշվից կատարված վճարումը (փոխանցումը).

2) **կրպակ՝** «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով սահմանված առևտրի օբյեկտի տեսակ.

3) **աշխատավարձ**՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված աշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ, ինչպես նաև «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքով սահմանված պայմանագրային եկամուտ.

4) **կանխիկ ձևով գործառնություն (վճարում)**՝ սույն օրենքով սահմանված՝ անկանխիկ չհանդիսացող վճարում.

5) **կանխիկ դրամ**՝ Հայաստանի Հանրապետության արժույթն ու արտարժույթը՝ թղթադրամների կամ մետաղադրամների տեսքով.

6) **ֆիզիկական անձ**՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի, օտարերկրյա քաղաքացի, երկքաղաքացի, քաղաքացիություն չունեցող անձ.

7) **կազմակերպություն**՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված (պետական գրանցում ստացած, հաշվառված) իրավաբանական անձ, դրա՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առանձնացված

ստորաբաժանում և հիմնարկ, օտարերկրյա կազմակերպություն, օտարերկրյա կազմակերպության՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առանձնացված ստորաբաժանում.

8) **վճարային քարտ կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքներ ընդունող սարքեր՝** ՊՈՍ-տերմինալ և այլ նմանատիպ սարքեր, որոնք հնարավորություն ունեն ընդունել անկանխիկ ձևով վճարում.

9) **անհատ ձեռնարկատեր՝** ըստ «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նշանակության.

10) **նոտար՝** ըստ «Նոտարիատի մասին» օրենքով սահմանված նշանակության.

11) **էլեկտրոնային փող, վճարային քարտ, վճարային գործիք՝** ըստ «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» օրենքով սահմանված նշանակության.

12) **փաստաբան՝** ըստ «Փաստաբանության մասին» օրենքով սահմանված նշանակության.

13) **պետական կառավարման համակարգի մարմիններ՝** ըստ «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքով սահմանված նշանակության.

14) **տեղական ինքնակառավարման մարմիններ՝** ըստ «Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» օրենքով սահմանված նշանակության.

15) **բանկ՝** ըստ «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքով սահմանված նշանակության.

16) **ապահովագրական ընկերություն՝** ըստ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքով սահմանված նշանակության.

17) **վարկային կազմակերպություն՝** ըստ «Վարկային կազմակերպությունների մասին» օրենքով սահմանված նշանակության.

18) **գրավատուն՝** ըստ «Գրավատների և գրավատնային գործունեության մասին» օրենքով սահմանված նշանակության.

19) կրիպտոակտիվներով ծառայություն մատուցող անձ՝ ըստ «Կրիպտոակտիվների մասին» օրենքով սահմանված նշանակության;